Social Security

Հնարավոր է Որ Դուք Կարողանաք Ստանալ Լրացուցիչ Ապահովության Եկամուտ (SSI)

2006թ.

www.socialsecurity.gov

Հնարավոր է Որ Դուք Կարողանաք Ստանալ Լրացուցիչ Ապահովության Եկամուտ (SSI)

Ի՞նչ է Լրացուցիչ Ապահովության եկամուտը

Լրացուցիչ Ապահովության Եկամուտը (SSI) դաշնակցային մի ծրագիր է, որը տրամադրում է ամսական կանխիկ վճարումներ այն անհատներին, որոնք շատ եկամուտ կամ դրամական միջոցներ չունեն: Լրացուցիչ Ապահովության Եկամուտ տրամադրվում է մեծահասակ անձերին, որեւէ տարիք ունեցող կույրերին եւ հաշմանդամ անձերին, ինչպես նաեւ երեխաներին:

Լրացուցիչ Ապահովության Եկամուտ ստանալու համար, դուք պետք է՝

- Լինեք 65 տարեկան կամ ավել, կամ
- Լինեք լրիվ կամ մասամբ կույր, կամ
- Ունենաք բժշկական մի վիճակ, որը արգելք է լինում ձեր աշխատելու կարողության եւ ակնկալվում է, որ նվազագույնը մի տարի շարունակվի կամ էլ ձեր մահվան պատճառ լինի: Երեխաների համար օրենքները տարբեր են: Հավելյալ տեղեկությունների համար կարդացեք *Benefits For Children With Disabilities.* «*Նպաստներ Հաշմանդամ Երեխաների Համար*» (հրապարակման համար 05-10026): Այս հրատարակությունը Հայերէն լեզվով չկա:

Որքա՞ն կարող եք ստանալ:

Լրացուցիչ Ապահովության Եկամուտի հիմնական ամսավճարը նույնն է երկրի տարածքում: Այդ հետեւյալն է՝

—$552 մեկ անձի համար, կամ

—$829 զույգի համար:

Ամեն անձ նույն գումարը չի ստանում: Հնարավոր է որ դուք ավելի ստանաք եթե ապրում եք մի նահանգում, որը փող է ավելացնում դաշնակցային Լրացուցիչ Ապահովության Եկամուտի վրա: Նոյնպես հնարավոր է որ պակաս ստանաք, եթե դուք (կամ ձեր ընտանիքի անդամները) ուրիշ եկամուտ ունեք: Ձեր բնակավայրը եւ ընտանիքի բաղադրությունը որոշում են ձեր որակավորումը Լրացուցիչ Ապահովության Եկամուտի նպաստները եւ ամսական գումարը:

Ինչպե՞ս որակավորվում եք Լրացուցիչ Ապահովության Եկամուտի նպաստների

Ձեր եկամուտը

Ձեր եկամուտը ընդգրկում է ձեր վաստակած փողը, Սոցիալական Ապահովության նպաստները, կենսաթոշակները եւ որեւէ այլ օգնություն, որ ստանում եք ուրիշ մի անձից, օրինակ՝ ուտելիք, հագուստեղեն եւ ապաստարան:

Դուք կարող եք ունենալ այլ եկամուտ եւ տակաւին իրավասու լինել Լրացուցիչ Ապահովության Եկամուտի: Ձեր բնակավայրը սահմանափակում է այդ եկամուտը: Տարբեր նահանգներ ունեն տարբեր օրենքներ:

Ձեր դրամական միջոցները՝

Հնարավոր է որ դուք Լրացուցիչ Ապահովության Եկամուտ ստանաք, եթե ձեր դրամական միջոցները (ձեր սեփական իրերը) մեկ անձի համար 2000 դոլարից պակաս լինեն կամ 3000 դոլար զույգի համար: Երբ ձեր Լրացուցիչ Ապահովության Եկամուտի դիմումնագրի որոշումը կայացնենք, ձեր ունեցած լրիվ դրամական միջոցները հաշվի չենք առնում: Օրինակ՝ ձեր տունը եւ ընդհանրապես ձեր ինքնաշարժը հաշվի չենք առնում: Սակայն, կանխիկ փող, դրամատան հաշիվները, բաժնետոմսեր եւ պարտատոմսեր հաշվի առնում ենք:

Դուք պետք է Ամերիկայի Նահանգների մշտական բնակիչ լինեք

Դուք պետք է Ամերկայի Միացեալ Նահանգներում կամ Հյուսիսային Մարիանա Կղզիներում ապրեք, որպեսզի կարողանաք Լրացուցիչ Ապահովության Եկամուտ ստանաք: Եթե Ամերկայի Միացեալ Նահանգների քաղաքացի չեք, սակայն օրինական բնակիչ եք, դարձյալ

(շրջել)

հնարավոր է որ Լրացուցիչ Ապահովության Եկամուտ ստանաք: Հավելյալ տեղեկությունների համար կարդացեք *Լրացուցիչ Ապահովության Եկամուտ (SSI) Ոչ Քաղաքացիների Համար* (հրապարակման համար 05-11051-AM):

Այլ նպաստներ

Լրացուցիչ Ապահովության Եկամուտ Ստանալու համար դուք նույնպես պետք է դիմեք որեւէ ուրիշ կանխիկ նպաստների որ ձեզ հնարավոր է ստանալ: Եթե Լրացուցիչ Ապահովության Եկամուտ ստանաք, ընդհանրապես դուք նաեւ կարող եք պարենային կտրոններ եւ Մէտիքէյտ ստանալ: Մէտիքէյտը կօգնի վճարել բժշկի եւ հիվանդանոցի ծախսերը, եւ պարենային կտրոններով կարող եք ուտելիքի գնել:

Ինչպես կարող են դիմել Լրացուցիչ Ապահովության Եկամուտի

Լրացուցիչ Ապահովության Եկամուտի դիմում ներկայացնելու համար ժամադրությամբ այցելեցեք Սոցիալական Ապահովության տեղական գրասենյակը:

Սոցիալական Ապահովության հետ կապ հաստատելը

Հաւելյալ տեղեկության համար, այցելեցեք մեր կայքէջը, ***www.socialsecurity.gov*** ուր նաեւ կարող եք գտնել մեր վերջին հրատարակությունները: Կարող եք նաեւ զանգահարել հետեւյալ անվճար թվին 1-800-772-1213 (խուլերը եւ դժուար լսողները

թող զանգահարեն հետեւյալ հատուկ TTY թվին 1-800-325-0778): Ինքնաշխատ հեռաձայնային ծառայությամբ, մենք որոշ հարցերի կարող ենք պատասխանել եւ տեղեկություններ հայթայթել օրը 24 ժամ:

Եթե Թարգմանիչի Պետք Ունեք. Մենք ձեզ համար անվճար թարգմանիչ կարող ենք տրամադրել որպեսզի դուք կարողանաք մեզ հետ ձեր գործերը կատարեք: Այս թարգմանչական ծառայությունը կարող եք գտնել մեր գրասենյակներում եւ հեռաձայնի վրայ: Զանգահարեցե՛ք մեզ հետեւյալ թվին **1-800-772-1213** եւ ճնշե՛ք թիւ մէկը: Հեռաձայնը պատասխանող ներկայացուցիչը միացնում է ձեզ թարգմանիչի հետ որպեսզի ան օգնէ ձեզի: Եթե չկարողացանք հեռաձայնով օգտակար լինել, ժամադրություն ենք տալիս որպեսզի դուք այցելեք ձեր տեղական գրասենյակը որտեղ ներկայ կը լինի նաեւ թարգմանիչը:

Մենք բոլոր խօսակցությունները գաղտնի պահում ենք: Ուզում ենք նաեւ վստահ լինել, թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու քաղաքավար ծառայություն: Այս պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ խօսակցությունները:

Social Security Administration
SSA Publication No. 05-11069-AM
You May Be Able To Get Supplemental Security Income (SSI) (Armenian)
January 2005